

«17» հոկտեմբեր 2019թ.

No 3010 - Ա

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԱՏ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԸ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, բնակչության անհետաձգելի բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ ու ժամանակին կազմակերպելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետության կողմից երաշխավորված վերակենդանացման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող Երևան քաղաքում գործող բժշկական կազմակերպությունների ղեկավարներին.

1) ապահովել վերակենդանացման ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում առկա մահճակալների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ

2) ապահովել իրական ժամանակում սույն կետի 1-ին ենթակետի տեղեկատվության թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,

3) Առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 2848-Ա հրամանով հաստատված բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և (կամ) արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչի 34.2 կետի համաձայն

վերակենդանացման ծառայության մահճակալների առնվազն 10%-ը նախատեսել Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի շտապ բժշկական օգնության բրիգադների կողմից հիվանդանոցային բժշկական կազմակերպություն տեղափոխված պացիենտների համար,

4) սույն հրամանի պահանջների ոչ լիարժեք կատարումը կանդրադառնա պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման հետ կապված հարաբերությունների վրա՝ հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 49-Ն հրամանի Հավելված 6-ի 14-րդ կետի 4)-րդ ենթակետը:

2. Միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգի պատասխանատուին.

ապահովել սույն հրամանի 1-ին կետով սահմանված տեղեկատվության մուտքագրման համար համապատասխան հարթակում լրացման պարտադիր դաշտի առկայությունը էլեկտրոնային առողջապահության համակարգում:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ.Դարբինյանին.

ապահովել սույն հրամանի տրամադրումը կատարողներին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտյոմ Սմբատյանին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ